

Զեմ թզաւ ևս այսօր ոչ վիօս ոչ բախիծ-
Գոցած եմ դռներն ողջ իմ եռագիներուն,
Ու ալ չեմ փայփայեր ձեր կարօսն անբիծ.
— Ո՞վ պիտի ձեզ լրսէ այս շա՛ր օրերուն:

Եւ ես ձեզ իմ սրտի ծաղիկներով հեզ
Դուսեցի բնելուրքամբ, պատեցի՝ մինչեւ.
Ամեն օր ինչ առ ինչ, նոխազ մը ուրպէս,
Կեանիքս զոն բրի ձեր խորանին առջեւ:

Բարձրագերձ լեռներու բռվիովի երկիւլած
Ու կանանչ անտառի հրաշեռովի անհաս
Լեցուցի նողիս կոյս բոցով մառեղծուած,
Ու իջան մի առ մի բուր խոհեր վրաս:

ԽԵց սրվիք դուք, սակայն, ձեր ցոլքով ժագտուն,
Սրտի մեջ դրած բոց կարօս մ'առ յաւես:
Հեռացի՛ք, նեռացի՛ք, մայր ու անտուն,
Ալ բողէ՛ք ինձ մինակ իմ հոգերուս նես:

Մամիրու

ՅՈՒՆ. ՄՈՀՏԵԱԱՐԱՆ

ԶԸՐԻԻԿ⁽¹⁾

ՔՐԴԱԿԱՆ ՎԷՊ

Զըրբիկ՝ մեծ մարդու մը տղայ կ'ըլ-
լայ: Հայրը կը դնէ վարժապուն՝ կը կար-
դացնէ: Աւուր մէկին՝ Բնավշշ-իսթուն,
կուգայ Զըրբիկն երազը, մասնիները իրա-
րու հետ կը փոխեն. հետ-լուսուն կ'ելնէ
վեր, քանի՛ որ իր վարժապեսն անոր դաս
կուտայ՝ Զըրբիկ չի սովորի, խաղ կ'ըսէ:

Վարժապետը կ'երթայ Զըրբիկի հօրը
կ'ըսէ, — ես քա՞նի որ անոր դաս կուտամ
անիկ խաղ կ'ըսէ: Անիկ խենթեցեր է. սի-
րահար է՝ ին'չ է....

Հայրը կ'ըսէ, — Հիմա ամաս է, թող

ելնէ գուրս՝ ման դայ, մինչեւ աշուն՝ նոր
դայ նասի իր դասին:

Զըրբիկ կ'ելնէ գուրս, թէ օր մ'ը՝ թէ
երկուք կը մնայ, մէկ օր կըսէ, — Ես սիսի
երթամ այնինչ տեղ:

Ենկերները կ'ըսեն, — Մենք ալ սիսի
դանք քեզ հետ:

Կ'ըսէ, — Զէ, ես մինալ սիսի եր-
թամ:

Օր մ'ը երկու-կ'երթա՛յ՝ հաց չ'ունենար
հետը, կ'անօթենայ, կ'ըսէ, — Երանի թէ
հաց մ'ըլլար՝ ես ուտէի, ու ջուր մ'ըլլար՝
ես խորէի, յեսայ մ'եւնիիի....

Կ'երթա՛յ.... մէկ սար մ'ը դէմ՝ կու-
դայ, սանկ կտիր մ'ը (հօտ) սիսար այդ-
տեղ կ'ալուծայ, հովիւը քովը:

Կ'ըսէ, — Հովիւ, հովիւ ըստծդ վաճափի
պէս է, հացաւը է: Աստծու սիրոյն ըլլար,
ուտէ՛լ մը խմե՛լ մը կա՛յ ըստեղ, ես քաղ-
ցեր եմ:

Հովիւը թէ, — Հա՛, Աստծու չնորհիւ
ու Արաբու Ամիրին, Բնավշշ-իսմիլը ի՞նչ

(1) Այս սրտառուչ իշքեաթավէպը գրի առած եւ 1907ին վաճառյ մէջ, կաւկարի բարբառով: Բնավշշ-իսմիլի Օրօրը («Իշայրուք») կը գնեմ Հայերէն մարգմանութեամբ միայն իսկ Իշքիաթին կմախքը կուտած աշխարհաբարով, որովհետեւ զուտ գաւառական լեզուն գիւրաւ չպիտի հասկցուի ընթերցողներէս: Բնավիրը կը տպուի Ազգագրական հատորի մը մէջ:

ընես ունի: Ուզեմ՝ քեզ ասրի մըն ալ կ'յսը. նամեմ...:

Զըբրիկ կ'րտէ, — Արարու Ամիրէն ես գիտեմ որ Արարու Ամիրա է, Բնավշ-Խանը՝ մ'ինչ է....

Կ'րտէ, — Բնավշ-Խանը՝ անոր աղջիկն է: Մ'էկ Զըբրիկ կ'ըսէն, գիշերով տեսեր՝ վըրան սիրահարուեր է, այսպէ՞ն զարնուեր է որ՝ զ'նէ տուած են էրկան, անոր մ'անչ մ'ը եղէր է, անոր սիրոյն՝ զաւկին անունն ալ դրեր է Զըբրիկ...

Կ'րտէ, — Համիւ ախալէր, ես քեզի բան մ'ըսիմ՝ դան իմ՝ խօսքը կրնո՞ս պահես, մ'արդո՞ւ չափանիւ....:

Կ'րտէ, — Համ, Աստուած մ'եր վրայ ըլլայ, որ թո՛ւ մ'արդու բան չեմ՝ ըսեր:

Կ'րտէ, — Զըբրիկ ե՛ս եմ. . . ես ինչ չպէս պիտի աեմնեմ. . . :

Կ'րտէ, — Հիմտ կուգամ՝ բէր (մ'ակաղատեղ), հալւախախտինք, դան եղիր հովիւ նասիր լերքար, անիկ կուգայ քու աջ թեւին կը նոտի, դու նեթո՞վ իրիշիէ', դիու՞: Սհանք կ'ելնեն կ'երթան՝ ես նո՞ր կուգամ՝ իմ՝ ոչսարի քավ:

Զըբրիկ կ'ելնէ իր հալաւը կը հանէ կուգայ հովիւին, անորը կը հագնի, թաղիու (գաբանակ) կը կործէ գլուխը, իր քիթրերանը կը կապէ՛ կը նոտի բէրքարին վրայ:

Բնավշ-Խաթուն իր ընկերուհիներովը անդիէն եկաւ, եկաւ անոր կշախին նասաւ, բէրի գլուխը:

Զըբրիկ ինչ իրիշից տեսաւ՝ խելքը դլիմէն զնա՞ց, . . . ստերջ (անծին) մ'արի մ'ը զինք զարկաւ անոր որախն, անիկ քարին վրայ շուռ գպաւ, անոր խէնջարի բուռը ջավանիւ էր, անոր ջավանիւ ջասաւէլքը զարկաւ Բնավշ-Խաթունի կոթին մ'էջ, Բնավշ-Խաթուն իրիշից Զըբրիկի կողմը՝ ինքն ալ շըշկրուա՞. . .

Բէրը ելաւ (գիւղ դարձաւ), Բնավշ-Խաթուն իր ընկերուն ըստ, — Դուք գացէ՞ք, ես նայիմ՝ իմ՝ հօր ոչսարները, մ'աքիներն ու զաները տեսնեմ՝ լմ'ան է ու լմ'ան չէ, յեսայ կուգամ. . . :

Բնակերներն ըսին, — Զէ՛, մ'ենք ալ կը մնանք քեզ հետ, մ'խառեզ կ'երթանք:

Բէրւորները գացին, անմնք երկուքը, Զըբրիկ ու Բնավշ-Խաթունը մ'էկոմէկ զըրկեցին այդտեղ, ո՛ւ ուշը մ'նոց անոնց վրայ. . . :

Հովիւն ելաւ իրիշկա՞ց՝ ինչ երկուքն այդտեղ պառկած են, ու ոչսարը մնացեր է անօթի՝ բէրին վրայ, վաղեց եկաւ բառ, Աստուած ձեր ասւնն առքէ. . . , դուք այդինչ է կ'ընէիք. . . , ոչսարն անօթի հատա՞ւ, բէրւորներն ալ եկան ձեր վրայ, դուք ամօթով կ'եղաք. . . :

Բնավշ-Խաթունը ըստաւ — Ապա ի՞նչ ընենք. . . : Զըբրիկ թող ըլլայ հիւսնոգ՝ պառկի հոտ, ու դան եղիր հովիւ՝ ինկիր մ'էջ ոչսարին: Քու ընկերներ երբ կուգան՝ դուն բարկացիր իրենց վրայ. . . :

Զըբրիկ եղաւ հիւսնոգ, թաղիքը քաշեց վրան, պառկիցաւ հոն: Աւ Բնավշ-Խաթունը ելաւ մ'անակը բոնեց ձեռքը՝ ընկաւ մ'էջ ոչսարին:

Բէրւորները երբ եկան՝ Բնավշ-Խաթունը ըստաւ, զէ՛յ, անզգամներ, տասուէ մ'ինչեւ հիմա ես հազար ոչսար կ'արածամ, դուք չէք լսեր՝ նայինք անիկ ի՞նչ եղաւ, Եր չեկաւ. . . , ու ձեր հովիւը հիւսնոգ է՝ կը մ'եսնի. . . :

Բէրւորներն ըսին, — Յիմի՛ կ'ընենք քեզմէ՛, չ՛ դուն ըսիր՝ Գացէ՞ք. . . :

Հոսաւ, — Ես ըսի Գացէ՞ք՝ շուտ գարձէ՞ք. . . երբ ես յամեցայ՝ թող դուք շուտ գանայի՞ք. . . : Վաստ յունի, լսու տուէք իմ՝ հօր՝ թաղ իր ձին թամբէ՛, զրիէ գայ այստեղ, ես հովիւը հեծցնեմ՝ տանիսմ՝ գընեմ իմ վրանիս տակ, գեղ մը տամ՝ ժրի՛, յեսոյ ելնէ գայ իր ոչսարներուն տառչ:

Լուր տունի իր հօրը, ձին թամբեց զըրկեց Բնավշ-Խաթունին, Զըբրիկը հեծցոց ձիան վրայ, տարս գրաւ իր վրանին տակ: Իր տուն անունն ալ Զըբրիկ է ու անո՞ն ալ: Այլեւս հա՛յրու՛րի (օրօ՛ր) կ'ըսէ եւ օրրացը կ'օրօրէ Բնավշ-Խաթուն օրրերդովը իր մ'իտքը Զըբրիկին հասկցնելով. . .

Այս գիշերը գիշեր է, անձրեւ գիշեր է.
Հուլ եկաւ առներու կուշալ նստաւ.
Այս գիշեր՝ իմ կարիճ Զըբրիկիս ընթրիքը
իր եարո՞ջ վրայ ինկաւ:

Հայ օրօ՛ր օրօ՛ը, իմ Զըբրիկ օրօ՛ր,
Հայ օրօ՛ր օրօ՛ր, իմ անուշն օրօ՛ր:

Իմ Զըբրիկ՝ Ամիրի աղայ է,
Անոր խէնչարի բուռը ջալանի՛ր է.
Անոր շաղն ինկեր է մէջ կաթի ամանին.
Հայ օրօր, հայ օրօր, իմ Զըբրիկ օրօ՛ր,
Հայ օրօ՛ր օրօ՛ր, իմ քա՛ղցրիկ օրօր:

Մինչեւ ե՛րբ դու պիտի հովիս մնաս,
Գիշերու ցերեկ սարերը մնաս,
Բնավշշ-Խաթունը բէրւոր ըլլայ. . . ,
Հայ օրօր, օրօ՛ր, իմ Զըբրիկ օրօ՛ր,
Հայ օրօր օրօ՛ր, իմ աղուս՛ր օրօ՛ր:

Այս օր օրօրս պիտի օրօրեմ,
Իմ սրտի եսցերը պիտի թափեմ:
Գիշերս իմ աղեկս կուշա պիտի ծծեցնեմ:
Հայ օրօ՛ր օրօ՛ր, իմ Զըբրիկ օրօր,
Հայ օրօ՛ր, օրօ՛ր, իմ գոչա՛րս օրօր:

Օրօրցի փայտը գըղթորի փայտ է,
Պիտի շարժեմ պիտի երգեմ, հայտէ.
Վա՛յ, Աստուտն այս աղի մեղքն իմ վզէն
չուզէ:
Հայ օրօ՛ր օրօ՛ր, իմ Զըբրիկ օրօր,
Հայ օրօ՛ր օրօ՛ր, իմ անուշն օրօր:

Զըբրիկօ, ե՛լ ու ձիանըրը բե՛ր,
Թամբէ՛, կապերը սինդեցուր,
Բնավշշ-Խաթունը առ ու փախցուր.
Հայ օրօր օրօր:

Զըբրիկ ելաւ՝ ձիանը թամբեց,
Կապ ու չումները սինդեց,
Բնավշշ-Խաթուն իր գործը շակեց.
Հայ օրօ՛ր օրօ՛ր:

Իմ Զըբրիկօ, քեզի՛ մասադ ըլլամ,
Ես լաւ ձի ունեմ՝ թոչունի՛ ցեղէ,
Ե՛լ Բնավշշ-Խաթուն փախցուր՝ առ սուր
մրի՛շ երիկը:

Հայ օրօ՛ր օրօ՛ր, օրօ՛րիկ օրօր,
Հայ օրօ՛ր օրօ՛ր, իմ Զըբրիկ, օրօր:

Օրօրցի փայտը բալալու՛մ է
իմ Զըբրիկը գեռ մանուշ է,
(Ավան'ս, Հարիւր հեղ ափսաս)
Գիշերս իմ աղուս Զըբրիկը մնաց անսուխնք,
Հայ օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛րիկ օրօ՛ր: ևն.

Իմ Զըբրիկը աղայ է գեռ,
Զոյկ քաղցր սովնեները կը հեծեն կը հեծեն
Գիշերս իմ կարիճ Զըբրիկը մնաց անընկեր:

Գիշերս գիշեր է, լուսակ գիշեր է,
Բնավշշ-Խաթունի ծիծը՝ մէկն սոկի՛ է,
մէկն արծաթ է,
(Ավան'ս, Հարիւր հեղ ափսաս)
Գիշերս՝ իմ Զըբրիկը մնաց անընթրիս,
Հայ օրօ՛ր, օրօ՛ր ևն.:

Իմ Զըբրիկը կառնկ-Հաւքս է,
Թը՛ռ սուեր՝ գացեր է Մուշի-Դաշար,
Պազն է անսացեր օրօրցի վերեւը:
Հայ օրօ՛ր օրօ՛ր ևն.

Զըբրիկ առաւ Բնավշշ-Խաթունը փայտաւ:

Ճամբան իր աղան մարէն չէր ելներ,
«Հայրուն» կըսէր ու կ'երթային...:
Բնավշssh-Խաթունի էրիկը իմանալուն
պէս՝ կ'անէ իր զօրքը՝ կ'իշնայ եռեներէն,
իր ձին քանց Զըբրիկի ճին աղէ՛կ կ'ըլլայ՝
կը հասնի փախցուներուն, կ'ըսէ.—
— եթէ իմ կնիկը իր կամքավ է
եկեր՝ քեզի բարով ըլլայ, ինձի պէտք չէ,
Զըբրիկ... թէ դու բոնի ես բերեր՝ գուն
իմ ձեռքէն չես սրգէիր, քեզ կ'սապանեմ...:
կ'նիկը կ'ըսէ թէ.— Յիրաւ ւի, ես երա-
զով աներ եմ, իմ սրտով սիրեր եմ, իմ
կամքավը կ'երթամ՝ Զըբրիկի հետ...:
կ'ըսէ.— Որ այդպէս է՝ բարով գ'տ-
յելէք մէկոմէկ...:
Եւ իր զօրքը կը քաշէ՝ իր դառնայ եսու

Փարլալ

Զիթուհնի